ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

413–1513–1913

(Կարդացուած կիրակի օրուան համազգային հանդէսին մէջ)

Հազար հինգ հարիւր տարի առաջ, այսօր էր, որ նուիրագործուեցաւ հայ քաղաքակրթութիւնը, և ազգերու մէջ Հայ Ազգն ալ քաղաքակրթութեան նահապետներէն մին եղաւ։

Հայ ազգի պայազատութեան, և տիեզերայաղթ թագաւորութեան ըսկիզբէն, մինչեւ Քրիստոսի չորրորդ դարու վերջերը, մեր հայերէն բնիկ բարբառին համար, Հայկական Գիր, Տառ չունէինք։

Այդ ժամանակները, մանաւանդ վերջին չորս դարերու մէջ, մեր հայ դպրութիւնները կը կատարուէին Յունականով, Ասորականով, և կրնամ ըսել նաեւ Պարսկականով, և այս այսպէս կը շարունակուէր Արքունական Դիւաններու ամէն գործերուն մէջ։

Հայկական ճոխ և հարուստ լեզուի դպրութեան համար, մեր այս թերութիւնը, սաստիկ տուած էր Յունական և Ասորական այնպիսի հնարամտութեան, որ էր Հայ ազգն իրենց մէջ ձուլելու, իրենց հետ միաւորելու մեծ մտադրութիւն մը։

Մէկ կողմէն Յունական, միւս կողմէն Ասորական պետեր ու եկեղեցականներ, ամէն ջանք կը թափէին, երբեմն քաղցրութեամբ ու համոզումներով, երբեմն նոյն իսկ բռնութեամբ, այդ միաւորումի նպատակին հասնելու համար։

Այսպիսի ծանրակշիռ պարագաներու մէջ էր, որ Հայ ազգը ունեցաւ, գրական և քաղաքակրթութեան ահաւիրայ երկու հարազատ զաւակներ՝ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ։

Ս. Սահակ որդին էր Գր. Լուսաւորչի ցեղէն Մեծն Ներսէս Պարթեւի, ծնած էր 348 Սեպտ. ամսոյ 29ին Նաւասարդի օրը Կեսարիոյ մէջ, ուր տեղ իր հայրը Ներսէս և իր մայրը Սանդուխտ ուսմանց կը հետեւէին, ինչպէս ինքն ալ Սահակ, երիտասարդութեան ժամանակ գրաղեցաւ հոն ուսմամբ և կրթութեամբ։

389 թուականին Ս. Էջմիածին կաթողիկոսական աթոռն ելաւ, և յիսուն տարիներ շարունակաբար բազմավիշտ և բազմարդիւն գործերով Հայոց կաթողիկոսական աթոռին վրայ տրժանապէս, և վախճանեցաւ 440ին Սեպտ. 29 նոյնպէս Նաւասարդի օրը։

Ս. Մեսրոպ՝ որ կը կոչուի նաեւ Մաշթոց, Տարոն գաւառի Հացեկայ գիւղէն Վարդան անուն երանելի անձի մը որդին էր, ծնած է 361ին, մանկութեան ատեն աշակերտած է Մեծն Ներսէսի, և երիտասարդութեան ատեն ալ նորին սրբազնասուրբ Հայրապետին նօտաբը եղաւ. Ներսէս հայրապետի մահուընէ ետքը, 383 թուականին, իր ուսմանց և դպրութեանց մէջ ունեցան՝ հմտութեանց վրայ խոսքով թագաւորին կողմէ Արքունական Դիւանապետութեան կոչուեցաւ, և հօթը տարիներ ալ շարունակեց այս պաշտօնն, իր կարողութեան և հմտութեան համար պատուասիրուելով և փառաւորուելով արքունական ամէն անձնաւորութեանց կողմէ։

Խոսրովի վախճանումէն քիչ ետքը՝ Մեսրոպը ձգեց աշխարհական կեանքը, մտաւ եկեղեցականութեան շարքին, որ ժամանակ Հայկական թագաւորութեան աթոռը կը բազմէր Վռամշապուհը։

Իր եկեղեցականութեան հինգ կամ վեցերորդ տարին էր, երբ քարոզութեան ելաւ քաղաքէ ի քաղաք, գիւղէ ի գիւղ, ուանէ յուան, և սակայն մեծ դժուարութեան կ'ենթարկուէր Ս. Գիրքը Ասորականէ, Յունականէ թարգմանութեամբ հայացնելով ուսուցանելու հայ ժողովուրդին, այս նեղութիւն և դժուարութիւններէ զատ, ամենամեծ մտահոգութեան ենթարկուած կը տեսնէր, ի մօտոյ տեսնելով հայ մանուկներու տառապումն, որոնք հեռաւոր երկիրներու մէջ կը դեգերէին, մանաւանդ մեծ ծախքերով ու թոշակներով ուսման և դպրութեան կը պարապէին Ասորի և Յոյն դպրոցներու մէջ։

Հայկական այս մեծ դժբախտութիւնը շատ մեծ տրտմութիւն և հոգ կը պատճառէր իրեն, երանելի Մեսրոպին, որուն վրայ հոգով և սրտով փղձկած, իր անձը նուիրեց հայ նըշանագրերու գիւտի աշխատութեան. աշխատեցա՛ւ, ջա՛նքեր թափեց, մեծ դժուարութիւններու հանդիպեցաւ, և սակայն առանց ետ կենալու և առանց յուսահատութեան իր աշխատութիւնը շարունակեց, դիմեց նաեւ Սահակ Պարթեւի և Ս. Կաթողիկոսին, պարզեց իր մտածումներն ու աշխատութիւնները, անոր ալ աջակցութիւնն ու օգնութիւնը խնդրեց։

Սուրբն Սահակ Պարթեւ ուրախութեամբ լսելով Ս. Մեսրոպը, իր ջերմ համամտութիւնը յայտնեց, և երկուքն ի միասին դիմեցին Վռամշապուհին, որպէս զի աջակցի իրենց՝ այս մեծ գործին իրականացման։

Ժողովներ գումարուեցան, խորհուրդներ կատարուեցան, աշխատութիւններ եղան, Սահակն և Մեսրոպը թէեւ հասան իրենց նպատակին, և սակայն գտնուած տառերն անբաւական եղան հայ լեզուի հնչումին։

Առանց յուսահատութեան, ամէն տառապանք, ամէն նեղութիւն առաջինչ համարելով, Ս. Մեսրոպ շարունակեց իր աշխատութիւնները, իր այդ մեծ նպատակին հասնելու համար

համբորդութիւն սկսաւ Միջագետք, Եգիպտոս, Սամուսատի գաւառներուն մէջ, և իր աշխատութեան արդիւնքով որ Աստուածային օգնութեամբ վերջնականապէս կատարելագործեց հայ տառերը ի փառս Հայ ազգին և անոր քաղաքակրթութեան։

Ահաւասիկ երկու մեծ առաջնորդներ. ճշմարիտ հերոսներ, երկու անմահներ Ս. Մեսրոպ որ կը հանգչի Էջմիածնայ մօտ Օշական գիւղի եկեղեցւոյն մէջ, Ս. Սահակ որ կը հանգչի Տարօնի Մատնավանքի մօտերը՝ Աշտիշատ անուն մատուռին մէջ, որոնց պատուական անունները՝ իրենց գործերով անմոռանալի են և անմոռանալի պիտի մնան մեր Հայ Ազգին համար. երախտապարտ ենք իրենց և երախտապարտ պիտի մնանք յաւիտեանս, մինչ այսպիսի համազգային տօներով յիշելով յիշատակելով իրենց անմահ անունները։ Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, եղիցի և եղիցի, ամէն։

Հայ գրի գիւտին հետ, հայ տպագրութեան 400 տարուան տօնն ալ կը կատարենք այսօր։ Պատմութենէն այնպէս գիտէինք թէ, հայերէն առաջին տպագրութիւնը եղած է 1565ին, Եւդոկիացի Աբգար դպրի և իր որդւոյն Սուլթանշահի ձեռքով, որոնք առաջին անգամ տպագրեցին Սաղմոս մը ի Վենետիկ, իրենց անձնականին յատուկ տպարանին մէջ, և որ փոխադրեցին տարի մը վերջ ի Կ. Պոլիս։

Թէեւ կարծիքներ կային թէ հայերէն տպագրութիւնը մեր մէջ մտած ըլլայ աւելի կանուխ ժամանակներու մէջ, բայց այս կարծիքը որոշ կերպով ու և է հաստատութեան յանգած չէր, և սակայն քանի տարի առաջ կատարելապէս հաստատուեցաւ թէ՝ մեր հայերէն տպագրութեան սկիզբը եղած է 1513 թուականին, որ ատեն «Մեղաւոր Յակոբ» անուն անձ մը՝ տպագրած է Վենետիկի մէջ եօթը կտոր գրեանք. 1. Պարզատումար, 2 Պատարագամատոյց, 3. Ուրբաթագիրք, 4. Տաղարան, 5. Մաշթոց, 6. Աղթարք, 7. Կիպրիանոս։

Այդ թուականին հաստատութեան աշխատողներ եղան երկու հայ եկեղեցականներ, առաջինը՝ Կիլիկիոյ այժմեան արժանաւոր Կաթողիկոս Տ. Տ. Սահակ Խապայեան, երկրորդը՝ եթէ համարձակութիւն և եթէ ինքնահաւանութիւն իսկ համարուի, պիտի ըսեմ թէ ես՝ անարժանս ու տկարս էր։

Սահակ Ս. Կաթողիկոսն 1892ին. Վենետիկ հրատարակուող Բազմավէպի Մայիս ամսոյ թիւին մէջ գրած էր իր խուզարկութեան արդիւնքը, և հայ տպագրութեան թուականը ցուցուցած էր 1523։

Իմ խուզարկութեան արդիւնքը մանրամասն գրուեցաւ. Վիեննայի Հանդէս Ամսօրեայի 1894 Դեկտ. ամսաթերթին մէջ, յառաջ բերելով Յակոբի բոլոր տպագրութիւններն, և որոշելով նաեւ բուն թուականն որ է 1513։ Այս թուականն այլեւս որոշ կերպով հաստատուեցաւ և ընդունուեցաւ։

Ինչպէս յայտնի է, տպագրական գիւտը եղաւ 1445 թուականին ի ձեռն Կուտտենպերկի Գերմանացւոյ, այս հռչակաւոր գիւտէն օգտուեցան ընդհանրապար նախ Գերմանացիք, և ինը տարի ետքը 1464ին Իտալացիք, 1470ին Գաղիացիք, 1474ին Անգղիացիք, Զուիցերիացիք և Սպանիացիք, 1491ին Սլաւօնացիք, 1513ին մենք Հայերս՝ ուրեմն տպագրութեան գիւտէն 58 տարի վերջ. վերջէն կու գան թուականի կարգաւ, Հիւսիսային Ամերիկացիք, Ռուսք, Տաճիկք, Եգիպտացիք են. հետեւաբար Հայ Ազգն ոչ միայն առաջինն է Ասիական ազգերուն մէջ տպագրութիւնն ընդունող, այլեւ աւելի փոյթեռանդն ու յառաջադէմ եղած է մի քանի Եւրոպական ազգերէ։

Այժմ կը մնայ գտնելու թէ ով էր այս «Մեղաւոր Յակոբ»ը, այս աշխատութեան ալ պիտի հետեւինք, և Աստուծով կը յուսանք թէ պիտի յաջողինք։

Ուրեմն կը գոչեմ այս երկու աշխատաւորներուն համար ալ, թէ օրհնեալ ըլլան Յակոբ, Աբգար և իր որդին Սուլթանշահ, ասոնց ծառայութիւններն ալ անմոռանալի պիտի մնան Հայ ազգին մէջ։

Կեցցէ Հայ Ազգը և կեցցէ Հայ քաղաքակրթութիւնը յաւիտեանս յաւիտենից։

1913 Հոկտ. 13   Տ. ԵՊ. ՊԱԼԵԱՆ

Զմիւռնիա

ՄԵԾ ՏՕՆԸ

ԽՕՍՈՒԱԾ Ռ. ԱԶԱՐՈՆԻ ԿՈՂՄԷ՝ ՄԻՋՔԼԻՒՊԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆԴԻՍԻՆ ՄԷՋ

Ազնի՛ւ հայեր,

Այսօր ամէնքս տօնական մեծ խրախճանութեան մը մէջ՝ եկած ենք անգամ մը եւս փառաւորել յիշատակը Ազգին վերանորոգիչներուն որ, դարեր առաջ, իրենց հանճարն ու ստեղծագործութիւնը ի սպաս դնելով Ցեղին վերածնունդին՝ փրկեցին մեր գոյութեան մրրկավար նաւը մեր պատմութեան անծայրածիր ալեկոծութիւններէն։

Ազգին վիճակը

Հայ ազգը, այդ շրջանին սկիզբները, կ'ապրէր բուռն և հերոս կեանքով մը որ զինքը, յետ երկար անկումներու և կանգնումներու, այլեւս, կըսպառէր, կը հիւծէր ջահի մը պէս որուն բոցը գեղեցկօրէն վառելէ վերջ՝ կը շիջանի իր ծոցին մէջ։— Մերթ պարսիկ և, մերթ, յոյն անխնայ յարձակումները՝ մէկը, զինուած տիրապետելու անսանձ տենչով, միւսը իր քրիստոնէութեան և կեղծ բարեկամութեան քօղերուն տակ ծածկած զմեզ չքացնելու, մեր ինքնուրոյնութիւնը իսպառ սպաննելու մեղապարտ մոլուցքը՝ ազգը հարուածած էին իր ա-